

ՄԻ՛ ԶԱՐՄԱՆԱՐ

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԻԻԹԱՐԵԱՆՑԻ

Թէ հըստարտ ամբոխն ինքն անբաւական
Հալեացք է ձըգում մի խեղճի վերայ,
Թէ ժըպիտներով արհամարհական
Նսուում է մէկին՝ հըրէան է դա:

Թէ մի մարդ տեսնես բազմութեան միջին,
Ծաղը ու ծանակի դարձած առարկայ,
Թէ հայհոյանքներ թշուառի գըլխին
Թափւում են առատ՝ հըրէան է դա:

Թէ հազար աստակ, բըռունցք ու մահակ
Անէծքով իջնում են մէկի վերայ,
Թէ քարշ են տալիս մի անտէր դիակ
Շըների առաջ՝ հըրէան է դա:

Թէ տուն է քանդւում, փըլւում, աւերւում,
Կատաղի բոցով թէ լափւում է նա,
Թէ կահ կարասիք ցըրւած փողոցում
Տեսնես ոտի տակ՝ հըրէինն է դա:

Թէ այնուհետև տեսնես մի թըշուառ
Օր-հացի համար դարձած իսբեբայ,
Որ քեզ կեղեքում է կատաղաբար՝
Ո՛հ, մի գարմանար՝ հըրէան է դա:

1882 Թ., Պետերբուրգ.